ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է

Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի

3 նիստում

"01"12.2022թ.

_________________

# ԱՄԲԻՈՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2022

Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| |
|---|
| Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը: |
| Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի 2022 - 2023 ուս.տարվա ուսումնական աշխատանքների ծավալային ժամաքանակը կազմել է 11816 ժամ:<br>Այլ ամբիոն փոխանցած - 180 ժամ: |
| Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը: |
| Ամբիոնում շարունակաբար անց են կացվել քննարկումներ դասավանդման գործընթացի և ուսանողական պրակտիկայի արդյունավետության բարձրացման հնարավոր մեթոդների վերաբերյալ: Քննարկումների ընթացքում շեշտը դրվել է ներլսարանային և արտալսարանային աշխատանքներում տեսական նյութի և գործնական հմտությունների զուգահեռ զարգացման և փոխլրացման սկզբունքի անհրաժեշտության վրա: Հատուկ ուշադրություն է դարձվել տեսական նյութի պարբերաբար արդիականացման գործընթացին՝ կարևորելով ուսումնառության գործընթացում մասնագիտական նորամուծությունների, նոր սկզբունքների և ապացուցողական բնույթ ունեցող նորագույն վերականգնողական (խոսքի, շարժումների, բարձրագույն հոգեկան ֆունկցիաների զարգացման, զբաղվածության ապահովման) մեթոդների ներդրման անհրաժեշտությանը: Փոփոխվել և թարմացվել են դասավանդվող շատ ընտրովի դասընթացներ, վերանայվել, արդիականացվել են առարկայական նկարագրերը՝ ուսանողակենտրոն ուղղությամբ, առավելագույնս համապատասխանեցնելով դրանք աշխատաշուկայի պահանջներին: |
| Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները: |

| |
|---|
| Հաշվետու տարում գնահատման մեթոդները քննարկվել և մշակվել են ամբիոնում անցկացված նիստերի ընթացքում: Առաջնահերթ է համարվել գնահատման համակարգի ստանդարտացման ապահովումը, ինչը ներառվել և արտացոլվում է առարկայական նկարագրերում, ինչպես նաև պարբերաբար վերահսկվում է ամբիոնի վարիչի կողմից: Առավել մեծ կարևորություն է տրվել գնահատման բաղադրիչների համար սահմանված չափանիշների մշակմանը: Անկախ առարկաների բազմազանությունից, այդ չափորոշիչները համապիտանի են բոլոր ուսումնական առարկաների համար: Գնահատման չափանիշները ամբիոնում սահմանված են յուրաքանչյուր առարկայական դասընթացի գործընթացում տրվող գիտելիքների ստուգման ձևին համապատասխան:  Ուսումնառողների գնահատման գործընթացում կարևորվել և կարևորվում են՝ ծրագրավորվածությունը (գնահատումը և վերլուծությունը իրագործվում է որոշակի ծրագրավորված, պլանավորված սկզբունքով), համակարգվածությունը (գնահատումը և վերլուծությունը պետք է համապատասխանեն ուսումնասիրվող նյութի կառուցվածքային բաղադրամասերին և կրեն մշտական բնույթ), օբյեկտիվությունը (գնահատումը և վերլուծությունը պետք է լինեն գիտականորեն հիմնավորված), թափանցիկությունը (ուսանողները պետք իմանան իրենց, նաև համակուրսեցիների գնահատականները, որը որոշակիորեն հանդիսանում է ակտիվության խթան), խնայողականությունը (հանձնարարությունների բովանդակությունը, պահանջվող մեթոդները պետք է համապատասխանեն ուսանողների հնարավորություններին, լինեն մատչելի և հստակ), թեմատիկությունը (ուսումնառողների գիտելիքների որակի գնահատումը անց է կացվում ըստ թեմաների, բաժինների), պահանջների նույնականացումը (անհրաժեշտ է հաշվի առնել կրթության համապետական բովանդակային ստանդարտները, համապատասխանեցնելով դրանք տվյալ մասնագիտության որակավորման համար անհրաժեշտ ստանդարտներին): Ուսումնառողների գնահատման համար կիրառվել են ընթացիկ և ամփոփիչ ստուգումներ: Ամփոփիչ ստուգումները, որպես օրենք, ներկայացված են բանավոր ստուգման տեսքով: Ընթացիկ ստուգումներն իրականացվել են գրավոր, բանավոր, թեստային ստուգումների, թղթապանակների կամ ներկայացումների ձևով: Ակադեմիական ազնվության ապահովման նպատակով ուսումնառողների գիտելիքների ստուգման գործընթացում կիրառվել են տարբեր մեթոդներ: Գրավոր աշխատանքերի պարագայում պարտադիր է հղումների առկայությունը՝ այլ ակադեմիական աղբյուրներից օգտվելու պարագայում, պարտադիր է նաև գրագողության հայտնաբերումը և կանխարգելումը: Թեստային ստուգումների դեպքում՝ ակադեմիական ազնվության պահպանման արդյունավետ մեթոդ հանդիսացել է թեստային հարցաթերթիկներում հարցերի ընտրության պատահականության սկզբունքի կիրառությունը, որը կարելի է ապահովել համապատասխան համակարգչային ծրագրերի միջոցով: |
| Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների  գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները: |

| |
|---|
| Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը վերաբերվել են մագիստրոսական, ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների քննարկմանը, մանկավարժական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների քննարկմանը, ամբիոնի հայցորդների ատենախոսական աշխատանքի քննարկմանը, ամբիոնի հայցորդների հաշվետվությունների քննարկմանը, էլ. հարթակում ակտիվության ապահովման, ուսանողների հետաքրքրությունների բավարարման, նկարագրերի և թեմատիկ տրոհումների պատշաճ կազմելուն և գնահատման առաջադրանքների տեղադրելուն, առաջադրանքների իրականացմանը նյութերի տեղադրման պատասխանատվություն: Նշված հարցերի և խնդիրների լուծման և առաջարկված միջոցառումների իրականացման համար ամբիոնում նշանակվել են պատասխանատուներ: |

| Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները: | | |
|---|---|---|
| Արձ.N, ամսաթիվ | Քննարկման հարցերը | Ընդունված որոշումները |
| 01.02.2022 թիվ 6 | 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերի, առարկայական փաթեթների և դասիչների հաստատման քննարկում: | Ամբիոնի վարիչի տեղակալ Գ. Հովյանը ներկայացրեց 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերը և առարկայական փաթեթները: Նշվեց նաև առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների Google classroom սահմանված ժամկետում տեղադրելու անհրաժեշտությունը: |
| | 2021-2022 ուս.տարվա 2-րդ կիսամյակի ընտրովի դասընթացների թեմաների քննարկում և հաստատում: | Հաստատել Դասընթաց ուսանողի ընտրությամբ առարկաների վերաբերյալ հարցը, ճշգրտվեց կիսամյակային ԴԱՍ-ուսների քանակի, նրանց որպես դասավանդվող առարկաների անվանումների և բովանդակության հարցերը: |
| | Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքի քննարկում: | Դասախոսներին հրահանգվեց լինել հետևողական կատարվող աշխատանքներին և խնդրահարույց դեպք նկատելու դեպքում անմիջապես զեկուցագրի տեսքով տեղեկացնել ամբիոն: |

| | | |
|---|---|---|
| | <<Լոգոպեդիա>> մասնագիտացման առկա 3-րդ կուրսի և հեռակա բաժնի 3-րդ և 4-րդ կուրսերի 2-րդ կիսաամյակի կուրսային աշխատանքների հաստատման հարցի քննարկում: | Հաստատել Լոգոպեդիա մասնագիտացման առկա բակալավր 3-րդ կուրսի և  և հեռակա բաժնի 3-րդ և 4-րդ կուրսերի 2020-2021 ուստարվա 2-րդ կիսաամյակի կուրսային աշխատանքների թեմաները: |
| | <<Լոգոպեդիա>> մասնագիտացման առկա 3-րդ կուրսի և հեռակա բաժնի 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկաների քննարկում և հաստատում: | Հաստատել պրակտիկաների իրականացման ընթացքը: Նշվեց նաև, որ պետք է բացել հարթակ, որի միջոցով պետք է իրականացվի պրակտիկաների կոնֆերանսները և ընթացիկ քննարկումները: |
| | Հեռակա բակալավր <<Լոգոպեդիա>> մասնագիտացման միջանկյալ և քննական հարցաշարերի քննարկում: | Հաստատել հեռակա բաժնի քննական տոմսերը: |
| 08.02.2022   թիվ 7 | Ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Ռոբերտի Հովյանին Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին գիտական կոչումներ շնորհելու կարգին համապատասխան՝ պրոֆեսորի գիտական կոչման շնորհելու հարցի քննարկում: | Միջնորդել ֆակուլտետի խորհրդին մ.գ.թ., դոցենտ Գոհար Ռոբերտի Հովյանին Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին գիտական կոչումներ շնորհելու կարգին համապատասխան՝ ներկայացնել պրոֆեսորի գիտական կոչման: |
| | Ամբիոնի որոշ առարկայական դասընթացների գիտելիքների ստուգման բաղադրիչների փոփոխման հարցի քննարկում: | Ամբիոնը ընդունեց  որոշում, որը ներկայացվում է ֆակուլտետի խորհրդին՝ այնուհետև ուսումնական բաժին ներկայացնելու նպատակով: |
| 18.04–22.04..2022 թիվ 8–11 | 2021-2022 ուս. տարվա առկա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական պաշտպանություն: | Ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը երաշխավորել հրապարակային պաշտպանության: |
| 02.05.2022   թիվ 12 | <<Լոգոպեդիա>> մասնագիտացման առկա բակալավր 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների և <<Լոգոպեդիա>>, <<Էրգոթերապիա>>, <<Արտթերապիա>> | Հաստատել «Լոգոպեդիա» մասնագիտացման առկա բակալավր 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների և «Լոգոպեդիա», «Էրգոթերապիա», «Արտթերապիա» |

| | | |
|---|---|---|
| | մասնագիտացման մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի նախնական պաշտպանությունների արդյունքների քննարկում: | մասնագիտացման մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի նախնական պաշտպանությունները և երշխավորել հրապարակային պաշտպանության |
| | Հեռակա բակալավր 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախնական պաշտպանությունների ժամանակացույցի հաստատում: | Հաստատել հեռակա բակալավր 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների պաշտպանությունների ժամանակացույցը: |
| 29.06.2022 թիվ 13 | «Լոգոպեդիա» մասնագիտացման առկա բակալավր 4-րդ և հեռակա 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և «Արտթերապիա», «Էրգոթերապիա» մասնագիտացման առկա մագիստրատուրա 2-րդ կուրսերի ատենախոսությունների պաշտպանությունների արդյունքների ամփոփում: | 2021-2022 ուսուումնական տարվա առկա և հեռակա ուսուցման ծրագրի ամփոփիչ ատեստավորման պետական քննությունների արդյունքները համարել բավարար: |
| | ՊԴԱ անձնակազմի տարեկան հաշվետվության ներկայացման և հաստատման հարցը: | Ներկայացված հաշվետվությունները համարել բավարար: |
| | 2022-2023 ուսումնական տարվա պդա անձնակազմի տարեկան ծանրաբեռնվածության նախապատրաստում: | Տեղեկատվությունն ընդունել ի գիտություն: |
| | Հեռակա ուսուցման համակարգի միջանկյալ և քննական հարցաշարերի քննարկում և հաստատում: | Հաստատել հեռակա ուսուցման համակարգի միջանկյալ և քննական քննական հարցաշարերը: |
| | Մատյանների և էլեկտրոնային տեղեկագրերի լրացման կարգի մասին հարցը: | Զեկույցն ընդունել ի գիտություն: |

| | | |
|---|---|---|
| 12.09.2022 թիվ 1 | 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի նոր առարկայական նկարագրերի, առարկայական փաթեթների և դասիչների հաստատման քննարկում: | 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերը, առարկայական փաթեթները և թեմատիկ տրոհումները ամբիոն ներկայացնել մինչև ս.թ սեպտեմբերի 15-ը և կայանալիք նիստում հաստատել 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերը, առարկայական փաթեթները և թեմատիկ տրոհումները: |
| | Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների նախնական քննարկում: | Ամբիոնի վարիչ Ս. Գրիգորյանը ներկայացրեց, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմաները քննարկված են գիտական ղեկավարների հետ, ովքեր պատասխանատվություն են կրում ընտրված թեմաների շրջանակներում իրականացվող պատշաճ հետազոտությունների իրականացման, ինչպես նաև՝ կրկնություններից : |
| | Բակալավր և մագիստրատուրա կրթական ծրագրի 1-ին կիսամյակի պրակտիկայի նախապատրաստական աշխատանքների քննարկում: | Ա. Գրիգորյանը ներկայացրեց 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում պլանավորվող պրակտիկաների իրականացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքները: Ա. Գրիգորյանի կողմից նշվեց պրակտիկաների իրականացման կոնկրետ ժամանակացույց, նշվեց նաև պրակտիկաների մեթոդիստների, հոգեբանի և մանակվարժների անունները: |
| | Էլ. հարթակի ընթացիկ առկա խնդիրների քննարկում: | Ս. Գրիգորյանը նշեց, որ յուրաքանչյուր ուսանող պետք է |

| | | |
|---|---|---|
| | | կցված լինի դասավանդվող առարկաների հարթակներին: Լրացված պետք է լինեն էլեկտրոնային մատյաններում ուսանողների անուն ազգանունները: |
| 30.09.2022 թիվ 2 | Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների նախնական քննարկում: | Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից մանրամասն քննարկվեց մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների բոլոր թեմաները: Պրոֆեսորադասախոսական կազմի կողմից կատարվեց որոշ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների վերնագրեր հստակեցումներ: Առաջարկվեց նաև որոշ վերնագրեր վերաձևակերպել: |
| | Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մեդալաշնորհման ամբիոնի կողմից առաջադրվող թեկնածուների քննարկման հարցը: | Ամբիոնի վարիչի առաջարկով և ամբողջ պրոֆեսորադասախոսական կազմի միաձայն որոշման արդյունքում որոշվեց, Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի կողմից առաջադրել մեդալների՝ Ս.Փալիկյանի և Գ.Հովյանի թեկնածությունը: |
| 01.12.2022 թիվ 3 | Ամբիոնի հայցորդների հաշվետվության քննարկում և հաստատում: | Ըստ ներկայացված հաշվետվության ատեստավորել ամբիոնի հայցորդներ Ա. Ասլանյանին, Գ. Հակոբյանին, Գ. Մամյանին, Մ. Ալեքսանյանին և Ա. Մանուկյանին : |
| | Ամփոփիչ ատեստավորման վերահանձմանը մասնակցելու թույլտվություն ստացած «Լոգոպեդիա» մասնագիտության հեռակա ուսուցման համակարգի | «Լոգոպեդիա» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի 2021-2022 ուստարվա ամփոփիչ ատեսավորումից «անբավարար» գնահատական ստացած շրջանավարտ Անի Վոլոդիայի Դավթյանի ավարտական |

| | | |
|---|---|---|
| | ուսանողուհի Անի Վոլոդիայի Դավթյանի ավարտական աշխատանքի նոր կամ նախկին թեմայի քննարկում և հաստատում: | աշխատանքի նախկին թեման եղել է «Մանկավարժահոգեբանական աջակցության մեթոդները դիզարտրիա ունեցող երեխաների հետ տարվողլոգոպեդական աշխատանքում» խորագրով: Ամբիոնի առաջարկով՝ համաձայնեցնելով գիտական ղեկավար Զ. Հարությունյանի հետ, որոշվեց հաստատել նախկին թեման: |
| | Ամբիոնի 2022 թ. տարեկան հաշվետվության հաստատում: | Ս. Գրիգորյանը ներկայացրեց 2022 թ. ամբիոնի կատարված աշխատանքները, ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները, ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովումը և մշտադիտարկումը:<br><br>Որոշեցին հաստատել ամբիոնի 2022 թ. տարեկան հաշվետվությունը: |

| | | |
|---|---|---|
| | Մագիստրոսական թեզերի վերաբերյալ գիտական ղեկավարների կողմից հաշվետվություն ներկայացնելու մասին: | Մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի վերաբերյալ հաշվետվությունների վերջնաժամկետ սահմանել մինչև դեկտեմբերի 15-ը: |
| | Ընթացիկ հարցեր :Ուսանողների հաճախումների  հարցի վերաբերյալ քննարկում: | Աբիոնի վարիչ Ս. Գրիգորյանը նշոց, որ ամբիոնի մասնագետ Ա. Օhանյանը Google Classroom էլ. հարթակի բոլոր դասընթացներում ստեղծել է էլեկտրոնային մատյաններ և հորդորեց դասախոսներին որպեսզի լինեն հետևողական և պարտադիր իրականացնեն ուսանողների հաճախումների հաշվառում: |

| Պրոֆեսորադասախոսական կազմը | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կանայք | Դոկտոր | Պրոֆեսոր | Գիտ.թեկն. | Դոցենտ | Ասիս-տենտ | Դասախոս | Ընդ-նը |
| Հաստիքային | 14 | 1 | 3 | 5 | 6 | – | 2 | 16 |
| Համատեղող | 1 | | | | | | | |
| Ժամավճարային | – | | | | | | | |
| Ընդա-մենը | 14 | 1 | 3 | 5 | 6 | | 2 | 16 |

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում: |
|---|
| Կրթական բարեփոխումների նպատակով իրականացված ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպում՝ ներառարկայական դասընթացների մշակման և առարկայական նկարագրերի կազմման առումով լոգոպեդական աջակցության և գնահատման մեթոդական աշխատանքների լուսաբանում և ուսումնական պրակտիկայում այդ մեթոդների ներդրում, համագործակցային աշխատանք Երևանի մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ: |

| Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Դասագրքեր | | | Ուսումնական ձեռնարկներ | | |
| ՀՊՄՀ դասիչով | ՀՀ ԿԳՆ դասիչով | Այլ դասիչներով | ՀՊՄՀ դասիչով | ՀՀ ԿԳՆ դասիչով | Այլ դասիչներով |

| Ամբիոնի  մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Միջազգային | | Հանրապետական | | Քաղաքային | | Համալսարանական | | Ամբիոնային | |
| կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. | կոնֆ. | սեմ. |
| 11 | 11 | 7 | 7 | 3 | 3 | 4 | | | |

| Գիտաուսումնական և գիտամեթոդական  դրամաշնորհներ | | | |
|---|---|---|---|
| Անվանում | Ժամկետ | Ֆինանսավորման ծավալ | Ամբիոնի մասնակից-անդամների քանակ |

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| Ամբիոնի հետազոտական գործունեությունը: |
|---|
| Ամբիոնի աշխատակիցների կողմից հաշվետու տարում տպագրվել են գիտական հոդվածներ, հետազոտական աշխատանքքներ տպագրվել են կոնֆերանսների նյութերի ժողովածուներում՝ այդ թվում միջազգային կոնֆերանսների նյութերում: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը  մասնակցել է գիտական սեմինարների: Ամբիոնի գիտահետազոտական ուղղությունները տարբեր են և ներառում են լոգոպեդիայի, էրգոթերապիայի և արտթերապիայի բնագավառում տարվող հետազոտական աշխատանքներ: Ամբիոնը նախատեսում է ընդլայնել նշված բնագավառներում գիտահետազոտական գործունեության շրջանակը, ինչը հնարավորություն կտա մասնակցել կամ մասնակցելու հայտ ներկայացնել տարբեր միջազգային հետազոտական ծրագրերի: |
| Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում: |
| Հաշվետու ուսումնական տարում ամբիոնում իրենց գիտահետազոտական գործունեությունն են ծավալում 9 հայցորդ:Բոլորի ատենախոսությունների թեմաները հաստատված են, բացի 2 հայցորդից՝ Ալեքսանյան Մերի և Խաչատրյան Սահակ, ովքեր  ձևակերպվել են  2019 |

| |
|---|
| թ.նոյեմբեր ամսին: Խաչատրյան Սահակի գիտական ղեկավարը դեռևս հաստատված չէ: |
| Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները: |
| Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից կատարվող գիտահետազոտական աշխատանքները միշտ չէ, որ կրում են կիառական բնույթ և կարող են լրացնել ուսումնական նյութերը կամ կիրառվել ուսումնական գործընթացում: Գիտահետազոտական թեմաների ընտրության գործընթացում առաջնայինը համարվում է աշխատանքի նորույթը, որը որպես կանոն փորձ է արվում հարմարեցնել ուսումնական գործընթացի առանձնահատկություններին, ինչպես նաև գրագողության բացակայությունը : Հետազոտական թեմաների և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմը հանդիսանում է դասավանդող մասնագետի հետազոտական աշխատանքների բովանդակության և հետազոտական հետաքրքրությունների շրջանակի համապատասխանությունը դասավանդվող նյութին կամ ուղղությանը, սակայն ոչ բոլոր դեպքերում է դա հնարավոր տեխնիկական և մեթոդաբանական խնդիրների պատճառով |

Ա. Պրոֆեսորադասախոսական

| Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/ | | | | |
|---|---|---|---|---|
| Ուղղության անվանումը | Աշխ-ի տեսակը | Ֆին.աղբյուր | Ֆին.ծավալ | Կատարողներ |
| Լոգոպեդիա | Հիմնարար | | | |
| Էրգոթերապիա | | | | |
| Արտթերապիա | Կիրառական | | | |

| ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ | | | |
|---|---|---|---|
| Հեղինակ Ա.Ա.Հ. | Մենագրության անվանումը | Հր.անուն և տարի | Ծավալ |

| Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ | | |
|---|---|---|
| Հեղինակ Ա.Ա.Հ. | Հոդվածի , զեկույցի անվանումը | Ծավալ |
| Նելլի Վանիկի Հունանյան | Աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հայացքով հաղորդակցվելու կարողության ձևավորման եվ զարգացման ուղիները | 7 էջ |
| Gohar Hovyan, Zaruhi Harutyunyan | The perspective of school-based Occupational Therapy intervention to enhance the participation of learners with special educational needs in school activities. Armenian journal of special education, Scientific | 124-139 |

| | | |
|---|---|---|
| | methodological journal,volume 5, issue 1. https//www.guetext.com,https://text.ru/antiplagiat,https://www.antiplagiat.ru/systems. | |
| Овян Г.Р., Шахбазян А.Т. | ЗАДАЧИ ВЫБОРА ЭФФЕКТИВНЫХ МЕТОДОВ И ПРИЕМОВ ОБУЧЕНИЯ ЧТЕНИЮ В ПРОЦЕССЕ ПРЕОДОЛЕНИЯ ДИСЛЕКСИИ . Научный журнал «Обществознание и социальная психология» Выпуск №12-<br>2 (42) 2022. Scientific journal «KPO-SCIENCE» Issue №12-2 (42) 2022. | 139-149 |
| Овян Г.Р.,Мелоян А.В. | ОСОБЕННОСТИ ПРИМИНЕНИЯ ГРУППОВЫХ ЗАНЯТИЙ<br>В ЛОГОПЕДИЧЕСКОЙ РАБОТЕ РАЗВИТИЯ РЕЧИ У ДЕТЕЙ С АУТИЗМОМ. Научный журнал «Обществознание<br>и социальная психология» Выпуск №12-3 (43) 2022. Scientific journal «KPO-SCIENCE» Issue №12-2 (43) 2022. | 126-134 |
| Пайлозян Ж.А. | Об оптимизации процесса восстановления речи и речевой коммуникации у пациентов с афазией. | 4 стр. |
| Пайлозян Ж.А., Тадевосян Э.Р., Саргсян Л.С.<br><br>Պայլոզյան Ժ. Հ., Բազինյան Մ. Օ. | Из опыта работы логопедической службы школы Международного Бакалавриата «Лицей Ширакаци»<br><br>Խաղեր Ինչուիկների, փոքրիկ Դերասանների և Փիլիսոփաների համար | 6 стр.<br><br>44 էջ |
| Пайлозян Ж.А., Тадевосян Э.Р., Саргсян Л.С. | Из опыта работы логопедической службы школы Международного Бакалавриата «Лицей Ширакаци». Образование лиц с особыми образовательными потребностями: методология, теория, практика : материалы Международной научно-практической конференции, г. Минск, 6 октября 2022 г. / Белорус. гос. пед. ун-т им. М. Танка. – Минск : БГПУ, 2022. ISBN 978-985-29-0229-8. | 5 էջ |
| Тадевосян Э.Р. | Использование методов развития дивергентного мышления в логопедической работе. Беларусь, г.Минск հանձնվել է տպագրության | 7 էջ |
| Թաղևոսյան Է.Ռ. | Կրկնակի բացառիկության ֆենոմենը՝ որպես ներառական կրթության արդի հիմնախնդիր հանձնվել է տպագրության | 7 էջ |
| Աղլոյան ԼԻԼԻԹ | ACTUAL SCIENTIFIC RESEARCH IN THE MODERN | 7 pg. |

| | | |
|---|---|---|
| Հարությունի | WORLD ISSUE 6(86) Part 4 June 2022 INTERNATIONAL SCIENCE JOURNAL Publishing schedule: 12 times/year (monthly) Published since June 2015 | |
| Մ.Շաբոյան,<br>Լ.Վարդանյան | <<Լոգոնևրոզը որպես հետպատերազմական սթրեսային ապրումների հետեվանք>> | 7 էջ |

| Ամբիոնի գիտական սեմինարներ | |
|---|---|
| Սեմինարի անվանումը | Անցկացման վայրը, օրը |
| «Աուտիզմ.խրախուսման տեխնիկաներ».<br>տեսագործնական դասընթաց (24ժամ)<br>Դասընթացավար՝ Ա.Հայրապետյան | 10.02.2022-24.02.2022<br>Վայրը. «Ռեքավերի քոլեջ» |
| «Արտթերապիան գործնականում.իրականացման և մեկնաբանման սկզբունքները»<br>տեսագործնական դասընթաց<br>(30 ժամ)<br>Դասընթացավար՝ Ա.Հայրապետյան | 21.02.2022-07.03.2022<br>Հայկական հոգեբուժական<br>ասոցացիա, Ամբրա<br>հոգեկան բարեկեցության կենտրոն |
| «Աուտիզմ. Վարքի ֆունկցիոնալ գնահատում»<br>տեսագործնական դասընթաց<br>(12 ժամ) | 01.03.2022-09.03.2022<br>Հայկական հոգեբուժական ասոցացիա |
| «Արտթերապիա.Մանկական տարիքի հոգեկան զարգացման խնդիրների<br>հաղթահարման տեխնիկաներ» տեսագործնական դասընթացը:<br>Դասընթացավար՝ Ա.Հայրապետյան | 14.03.2022- 28.03.2022<br>Վայրը. «Ռեքավերի քոլեջ»<br>Հոգետոցիալական<br>կարգավորման կենտրոն |
| «Երաժշտական և արվեստի դպրոցներում ներառականության<br>ապահովմանն ուղղված դասընթացներ» | 15.03.2022-12.09.2022<br>Վայրը. «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն»<br>ՊՈԱԿ.<br>ՀՀ ԿԳՄՍ նախարարություն |
| «Արտթերապիան գործնականում»<br>Գործնական դասընթացներ, խորհրդատվությունների տրամադրման գործընթաց<br>/սուպերվիզիաների իրականացման աշխատանքներ/<br>ՀՀ մարզերում վերականգնողական կենտրոններին տրամադրվող աջակցային<br>սուպերվիզիաներ կենտրոնի հեգեբան-արտթերապիստների համար | 04.12.2022- 19.12.2022<br>Վորլդ Վիժն Հայաստան |
| «Արտթերապիան գործնականում»<br>Գործնական դասընթացներ, խորհրդատվությունների տրամադրման գործընթաց , | 12.09.2022 -17.11.2022<br>Կապան քաղաքի մանկական<br>վերականգնողական կենտրոն |

| | |
|---|---|
| աջակցային սուպերվիզիաներ կենտրոնի նների համար | |
| «Դպրոցներում ներառականության  ապահովմանն ուղղված դասընթացներ» | 10.10.2022-28.10.2022<br>Դիլիջանի կենտրոնական դպրոց |
| Systematic Assessment of Rehabilitation Situation in 2 Armenia (STARS) 2022 | Yerevan – Armenia; 12 November |
| Առողջապահության համաշխարհային կազմակերպության առաքելության ամփոփիչ սեմինար գործընկեր կառույցների հետ | նոյեմբերի 15-ին ժամը 10:00-12:00<br>Հոլիդեյ Ինն հյուրանոցի «Արմավիր» սրահ |
| «Ի.ԷՍ.ԱՅ.ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՒՄԲ» Հասարակական կազմակերպություն (ՀԿ) UNICEF-9-ի ֆինանսավորմամբ ծրագրի շրջանակում Փորձարկում և փորձարկման հիման վրա մեթոդական ուղեցույցի մշակում | 2022թ. օգոստոս<br>N08/Unicef-9 01.07.2022թ.<br>ք. Երևան<br>11.08.2022թ. |
| Գրավոր խոսքի խանգարումների շտկման ժամանակակից մոտեցումներ | ՀՄԿ, 18.03.2022թ. |

| Ամբիոնի աշխատակիցների կողմից պաշտպանված ատենախոսություններ | | | |
|---|---|---|---|
| Ա.Ա.Հ. | Թեկն/դոկտորական-մասնագիտություն | Պաշտպ-ն ամսաթիվ | ԲՈԿ-ի հաստատում |
| Շբոյան Մերի | «Լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման ուղիները կոկորդի հեռացումից հետո» ԺԳ.00.03 - «Հատուկ մանկավարժություն» (Լոգոպեդիա) | 30.06.2022 | 10.10.2022 |

| Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ | | | |
|---|---|---|---|
| Դասախոս Ա.Ա.Հ./հաստիք | ՈԲ-ի անցկացման հաստատություն | ՈԲ ժամկետները | Արդյունք |
| Մերի Շաբոյան | ՌԴ-ի Կալուգա քաղաք «Среднерусская академия | 2021-2022թթ.<br>1 ուս. տարի | Դիպլոմ |

| | | | |
|---|---|---|---|
| | современного знания» ուսումնական հաստատություն «Բժշկական լոգոպեդիա» մասնագիտություն: Կլինիկական լոգոպեդ: | | |
| Մերի Շաբոյան | <<Սահուն կարդալ ուսուցանել>> ուսուցման նյարդահոգեբանական մոտեցումները ըստ Ելենա Առբեկովայի մեթոդի <<Մտածում եմ, կարդում եմ. Հասկանում եմ>>: Առցանց վերապատրաստում: 54 ժամ, վկայական: SKLAD | 27.09.2022-08.10.2022 | Վկայական |
| Մերի Շաբոյան | <<Վերականգնողական բժշկության միջմասնագիտական վերապատրաստում>>: | 10.10.22 (10 ամիս) | Վկայական |
| Մերի Շաբոյան | <<Հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումների և անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման ծրագիր>> երկրորդ, երրորդ փուլեր: Պետական ծրագիր: | 06.09.22-16.09.22 | Վկայական |

Բ. Ուսանողական

| Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ |
|---|

| Համատեղ գիտահետազոտական աշխատանքներ | | | |
|---|---|---|---|
| Դասախոս Ա.Ա.Հ. | Ուսանող Ա.Ա.Հ. | Հոդվածի անուն | Հրատ.անվ-մ |

| | | | |
|---|---|---|---|
| Հովյան Գ.Ռ | Մելոյան Ա.Վ. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի մագիստրոս | Խմբային պարապմունքների կիրառման առանձնահատկությունները աուտիզմ ունեցող երեխաների խոսքի զարգացման լոգոպեդական աշխատանքում | Научный журнал «Обществознание и социальная психология» Выпуск №12-3 (43) 2022. Scientific journal «KPO-SCIENCE» Issue №12-2 (43) 2022. |
| Հովյան Գ.Ռ | Շահբազյան Ա.Տ. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի մագիստրոս | Ընթերցանության ուսուցման արդյունավետ մեթոդների և հնարների ընտրության նպատակները դիսլեքսիայի հաղթահարման գործընթացում | Научный журнал «Обществознание и социальная психология» Выпуск №12-2 (42) 2022. Scientific journal 3 «KPO-SCIENCE» Issue №12-2 (42) 2022. |

| Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում և ուս. զեկույցներ | | |
|---|---|---|
| Կոնֆերանս/ միջազգ., հանրապ., բուհական/ | Կոնֆերանսի անվանում/ կազմակերպիչ | Ուսանողական զեկույց / քանակ |

| Ուսանողական առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ | | | |
|---|---|---|---|
| Օլիմպիադայի մակարդակը | Մասնագիտական շրջանակ | Ուսանող քանակ | Մրցանակային տեղ/Ա.Ա.Հ. |
| Միջազգային | | | |
| | | | |
| Հանրապետական | | | |
| | | | |
| Տարածաշրջանային | | | |

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում: |
|---|
| Հաշվետու տարում ամբիոնի աշխատակիցները ընդգրկված են եղել մի շարք միջազգային ծրագրերում՝ ուսումնական, մեթոդական և գիտական համագործակցություն ծավալելով ԱՄՆ Չեխիայի Պարդուբիցեյի համալսարանի, Ֆինլանդիայի «Օուլու» համալսարանի հետ, ԱՄՆ Պերկինսի միջազգային ծրագիր: |
| Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում: |
| Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը համագործակցել է Չեխիայի Պարդուբիցեյի համալսարանի, Ֆինլանդիայի «Օուլու» համալսարանի հետ, ԱՄՆ Պերկինսի միջազգային ծրագրի շրջանակներում ամբիոնի 5 դասախոս մոդուլային ծրագրով վերապատրաստում են անցել: |

| Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Բուհ/ամբիոն /երկիր | Համագործակցության ձևը | | | | |
| | Ուսումնական | Մեթոդական | Գիտական | Հետազոտական | Այլ |

| Պրոֆ-դասախոսական անձնակազմի շարժունակություն | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. Ամբիոնի աշխատակիցների աշխատանք արտասահմանյան բուհերում | | | | |
| Դասախոս Ա.Ա.Հ. | Պաշտոն | Երկիր/բուհ | Մնալու ժամկետ | Արդյունքներ |
| Բ. Ամբիոնի կողմից հրավիրված արտասահմանցի դասախոսներ | | | | |

| Համագործակցային միջազգային ծրագրեր | | | |
|---|---|---|---|
| Անվանում | Գործընկեր | Ժամկետ | Ամբիոնի մասնակից դասախոսներ |

| Մասնակցություն ՀՊՄՀ միջազգային ծրագրերին | | | |
|---|---|---|---|
| Անվանում | Գործընկեր | Ժամկետ | Ամբիոնի մասնակից դասախոսներ |
| 2021-2022 Perkins School for the Blind միջազգային կազմակերպության կողմից իրականացվող մոդուլային վերապատրաստման ծրագիր՝ Գլխուղեղային (Կեղևային) տեսողության խանգարում (ԳՏԽ) | Perkins School for the Blind | 2021թ. Սեպտեմբեր –Հոկտեմբեր Դեկտեմբեր | Մ. Հարությունյան, Ա.Գրիգորյան, Ս.Կարապետյան, Ա. Կիրակոսյան |

| | | | |
|---|---|---|---|
| խորագրով, / մոդուլ 1, մոդուլ 2, մոդուլ 3/ | | | |
| 2022 հունիս Perkins School for the Blind միջազգային կազմակերպության կողմից«Գլխուղեղային (Կեղևային) տեսողությանխանգարում» (ԳՏԽ) թեմայով իրականացված մոդուլային վերապատրաստման ծրագրի արդյունքում նոր առարկայական ծրագրի համահեղինակ “Cerebral visual impairment” խորագրով | Perkins School for the Blind | 2022 հունիս | Մ.Հարությունյան<br>Ա.Գրիգորյան<br>Ս.Կարապետյան<br>Ա. Կիրակոսյան |
| 2022 ԱՀԿ ՖՄԴ թեստերի ընտրության և մեթոդական ուղեցույցի համալրման աշխատանքային խմբի անդամ: Առողջապահություն համաշխարհային կազմակերպության ֆունկցիայի միջազգային դասակարգման հիման վրա հաշմանդամության գնահատման համար մշակված գործիքների «d» կոդերի՝ անձի գործունեության և մասնակցության գնահատման մեթոդական ուղեցույցի համահեղինակ | Առողջապահություն համաշխարհային կազմակերպություն | 2022 հուլիս-օգոստոս, սեպտեմբեր | Մ.Հարությունյան |

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները: |
|---|
| Ամբիոնի դասախոսները ՀՀ մարզերի և ք. Երևանի տարբեր դպրոցներում, ինչպես նաև հանրության շրջանում պարբերաբար իրականացնում են մասնագիտական իրազեկման |

| |
|---|
| աշխատանքներ՝ դիմորդների համալրման նպատակով |

| Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ | | | |
|---|---|---|---|
| Աշխ-ի տեսակը | Համակարգող Ա.Ա.Հ. | Միջոցառման անվանումը | Ժամկետը |
| Ուսումնական | Կիրակոսյան Արմինե | Իրազեկում Երևանի Խաչիկ Դաշտենցի անվան թիվ 14 ավագ դպրոց | 13.12.2022 ժամը՝ 12.30 |
| | Գրիգորյան Աստղիկ | Իրազեկում ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 118 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ԱՐԱՄԱՅԻՍ ԵՐԶՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ պետական ոչ առևտրային կազմակերպությու ն (ՊՈԱԿ) | 02.11.2022 ժամը՝ 11.30 |
| | Թաղևոսյան Էմիլյա | Իրազեկում Երևանի թիվ 2 ավագ դպրոց | 6.12.2022թ., ժամը՝ 11:30 |
| | Հովյան Գոհար | Իրազեկում Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց և թիվ 1 ավագ դպրոց | 7.12.2022թ., ժամը՝ 11:00 |
| | Հունանյան Նելլի | Իրազեկում ԵՐԵՎԱՆԻ ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 62 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ պետական ոչ առևտրային կազմակերպությու | 21.12.2022., ժամը՝ 11:30 |

| | | | |
|---|---|---|---|
| | | ն (ՊՈԱԿ) | |
| | Գրիգորյան Գեղեցիկ | Իրազեկում ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 189 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՍԱՄՎԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ պետական ոչ առևտրային կազմակերպությու ն (ՊՈԱԿ) | 07.12.2022 ժամը՝ 11:30 |
| | Աղլոյան Լիլիթ | Իրազեկում ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 109 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ պետական ոչ առևտրային կազմակերպությու ն (ՊՈԱԿ) | 09.12.2022 ժամը՝ 13:30 |
| | Շաբոյան Մերի | Իրազեկում Նոր Հաճնի ավագ դպրոց | 21.12.2022 ժամը՝ 11:30 |
| Մեթոդական | | | |
| Դաստիարակչական | | | |

| Աշխատանք հանրության շրջանում | | | |
|---|---|---|---|
| Աշխ-ի տեսակը | Համակարգող Ա.Ա.Հ. | Միջոցառման անվանումը | Ժամկետը |
| Զրույց ուղիղ եթերում | Յունիսեֆ Հայաստան ՖԲ էջ | Խոսքի հապաղման ախտանշանները | 20.10. 22 |
| | Բարի Մամա կազմակերպությու ն | «Լոգոպեդական աշխատանքի կազմակերպումը առողջապահական համակարգում» | 01.10.22-02.1022 8 ժամ |

| | | | |
|---|---|---|---|
| | Մոդեստա «Գրագետ Խնամող» | «Դիսլալիա» | 12.02.22-19.02.22 |

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

| Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը: |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի կողմից որակի ապահովման նպատակով իրականացվել է մշտադիտարկման աշխատանքներ՝ վերահսկելու ուսումնական գործընթացի ընթացքը և ներկայացված պահանջների կատարումը: |

| Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսները մասնակցել են ուսումնական գործընթացի որակի ապահովման երկօրյա սեմինար-վերապատրաստման, որի ժամանակ ներկայացվել են առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների ներկայացման նոր մոտեցումները, քննարկվել են հաճախ հանդիպող բացթողումները և անճշտությունները: Ամբիոնի կողմից դասավանդվող 43 առարկայական նկարագրերից և թեմատիկ տրոհումներից 40-ը արդեն իսկ վերափոխած ներկայացված են հարթակում:<br>Classroom էլեկտրոնային դասընթացների բոլոր էլեկտրոնային դասընթացներում առկա է ԿԷԿ բաժնի ամբիոնային էլ. հասցեները և ֆակուլտետային էլ. հասցեները: Բոլոր դասախոսները կցված են դասընթացնեին, ապահովված է ուսանողների և դասախոսների կցվածությունը դասընթացներին:<br>Հաշվետու ժամանակահատվածում առցանց ձևաչափով իրականացված դասընթացների վերահսկողության արդյունքում չեն արձանագրվել հատկանշական խախտումներ: Դասընթացներն իրականացվել են համապատասխան սահմանված դասացուցակի:<br>Իրականացված մշտադիտարկման արդյունքները փաստում են, որ բոլոր դասընթացներում առկա են ուսումնամեթոդական փաթեթը, դասընթացներ պարունակում են դասախոսությունների փաթեթները , ինչպես նաև յուրաքանչյուր օրվա դասի համար: Թեմաները համապատասխանում են թեմատիկ տրոհման հետ և առանձնացնված են Topic-ներով:<br>Էլ. մատյանները լրացման աշխատանքները իրականավցում են բնականոն կերօպով՝ ըստ դասացուցակով նախատեսված դասաժամերի: |

| Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում | | |
|---|---|---|
| Միջոցառման անվանումը | Պատասխանատու | Արդյունքաhենություն |
| Էլեկտրոնային դասընթացների ստեղծում, | Մ.գ.թ., դասախոս՝ Է.Թաղնոյան | Լավ |

| | | |
|---|---|---|
| վերահսկողություն | Ամբիոնի մասնագետ՝ Անի Օհանյան | |
| | | |
| Մշտադիտարկում, Classroom էլեկտրոնային դասընթացների վերահսկողություն | Զ. Հարությունյան | Լավ |

Ինքնագնահատում (**SWOT-վերլուծություն**)

| | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր**<br><br>Ամբիոնի աշխատանքներում ուժեղ կողմ ենք համարում այն, որ ամբիոնում դասավանդում են լոգոպեդիայի ոլորտում ՀՀ լավագույն և առաջատար մասնագետները, ինչը ապահովում է ուսման բարձր որակ: | **Թույլ կողմեր**<br><br>Թույլ կողմ ենք համարում այն, որ ամբիոնի դասախոսները և լոգոպեդ մասնագետները ստիպված են դասավանդել մասնագիտական առարկաների լիարժեք միայն տեսական մասը : |
| **Հնարավորություններ**<br><br>Ուսման որակը բարձրացնելու նպատակով ցանկալի կլիներ, որ ամբիոնը ունենար հատուկ լոգոպեդական գործնական աշխատանքների սենյակ, ինչը լրացուցիչ դիմորդների հոսք կապահովեր: | **Վտանգներ**<br><br>Հաշվի առնելով որ հեռակա ուսուցման համակարգի ուսանողների մեծամասնությունը շրջաններից են, բացի այդ աշխատում են և մանկահասակ երեխաներ ունեն, ինչը դժվարություն է ներկայացնում ներկայանալ առերես դասերի, ցանկալի կլիներ նրանց դասերը անցկացնել առցանց կամ հիբրիդային եղանակով: |